

Համայնքների հողի հարկի և գույքահարկի հաշվարկման և հաշվառման ավտոմատացված համակարգը ներդրվել է առանձին խոշոր համայնքներում և այդ նպատակով ստեղծված միջհամայնքային միություններում կամ կառույցներում: Խոշոր համայնքները, ունենալով համապատասխան տեխնիկական և ֆինանսական միջոցներ, ինչպես նաև համապատասխան մասնագետներ, կարողանում են ինքնուրույն վարել իրենց համակարգերը (բազաները), իսկ փոքր համայնքները, որոնք այդ հնարավորությունը ժամանակին չեն ունեցել, միացել են և ստեղծել միջհամայնքային միություններ կամ կառույցներ և կենտրոնացած վարում են իրենց համակարգերը՝ խուսափելով բազմաթիվ ռիսկերից:

Հայաստանի Հանրապետությունում թվով 915 համայնքներից հողի հարկի և գույքահարկի ավտոմատացված համակարգերը ինքնուրույն վարում են թվով 487 համայնքներ և Երևանի 12 վարչական շրջաններ: Մնացած 427 համայնքների բազաները վարում են թվով 17 համայնքային միություններ (որտեղ ներառված են 262 համայնքներ) և 51 միջհամայնքային կառույցներ (որտեղ ներառված են 165 համայնքներ):

Ինտերնետ կապի առկայությունը եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը թույլ են տալիս այդ համայնքներին առանց փոփոխություն անելու տնօրինել իրենց համակարգերը: Այս ձևն առաջինը կիրառել է Սիսիանի համայնքների միությունը, այնուհետև այդ փորձը տարածում է ստացել հանրապետության մի շարք համայնքների միություններում (մասնավորապես Իջևանի և «Մխչյան» համայնքների միություններում), որտեղ արձանագրվել են դրական արդյունքներ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավտոմատացված համակարգերի կենտրոնացած վարումն ավելի արդյունավետ է և ծախսային առումով համայնքների համար ավելի շահավետ: